

ՊԱՏԱՆՈՐԻՍՏՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ձր.
Տարեկան	6 "
Վեցամսեայ	6 "
Արսասահմանի	
համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Ամերիկայի համար	
Տարեկան	3 զր.
Վեցամսեայ	1.50 "

Դրանուցման տար ամս
 շին կրնաին համար 40 ս.
 իսկ վերջին երեսին հա-
 մար 20 ամսիսի կ. երե-
 ֆեկ արեյի անգամներու
 համար 20 0/0 գեղջ կըլ
 լայ:

ՉԱՐՇՈՒՄ

ՄԱՐԿԻ ԱՅԳԱՅԵՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԻՏՏՐԱՅԻՆԻ ՉՈՐԵԲԻՍՏՐՈՒԹԻ ԵՒ ԴԱԲԵԹ ՕՐԵՐԸ

Նախկին և նորապիսի
 հարգարարներու հաս-
 ցելիս

Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Charjoum“
 Varna (Bulgarie)

Արսասահմանի համար
 ձեռք
)(20 ՍԱՆԹԻՄ)(
 Պուշկարիոյ համար
 ձեռք
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք ևս չեն տրուիր

ՉԱՐՇՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՄԸ ԲԱԺՆԵՒԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԵՐԿ ՎՃԱՐԻ

ԿԱՐԵՆՈՂ ՍՉԴ

Արեւելեան տպարանի տէր և
 սիւլիպիսթի Տրատարակիչ Պ.
 Օննիկ Բարսեղեան ճամբորդելով
 Ռուսիան, յանձն առած է գան-
 ձել մեր բաժնեգրները:

Կը խնդրենք մեր բաժնորդ-
 ներէն իրենց պարտքերը յանձ-
 նել պարտին առանց ձգձգելու:

Պ. Բարսեղեան իր քովը ունի
 ընկալագիրներ և մեր բաժա-
 նորդներու ցանկը: Ի՞նչ բարե-
 կամներէն կը խնդրենք աշակցին
 Պ. Բարսեղեանի իր սիրալոյսով
 կերպով ստանձնած գործը յա-
 ջողութեամբ ի գլուխ բերելու:

Պ. Բարսեղեան պիտի այցելէ
 նաև Ռուսիոյ: Երբ կը խնդ-
 րենք Ռուսիոյ բարեկամներէն
 Խրատարարին

Երբն օրօրեւ են ուղել սին յոյս
 բով, զգուշացրել ենք ժողովը-
 զին հետու կենալ սխալ յոյսերից,
 որովհետեւ սրտնք մեզ սխալ
 ճամբի մէջ կը դնեն և կը շեղեն
 մեզ մեր գործունէութեան ուղիւ
 քմից:

Կարածական խնդիրները, ու-
 սական սինեզի պաշտօնական թեր-
 թի վերջին յայտարարութիւննե-
 րը եկան և աւելի շօշափելի կեր-
 պով փաստեցին, թէ հայերս ու
 ռուսները բարեկամներ լինել
 չենք կարող, միշտ ընդհարումներ
 պէտք է ունենանք. որովհետեւ
 ռուս կառավարութիւնը ամենայն
 լրբութեամբ ուզում է մեզ ձուլել
 և մենք էլ միշտ պարտաւորված
 պէտք է լինենք ինքնապաշտպա-
 նութեան դիմել, ինչ միջոցով
 էլ լինի այդ, պարագաներից է
 կախված:

Ռրեմն այսօր մեր և ռուս կա-
 ռավարութեան դիրքերը որոշ են.
 մենք հակառակորդներ ենք. ու-
 սը երբեք չի զիջանի, մենք էլ
 չենք զիջանելու: Կլլել ձգտողի
 դէմ ինքնապաշտպանութիւն. ա-
 հա մեր բռնելիք դիրքը, որը
 ինքը կեանքը պատմականօրէն
 հրամայողական գարձնաց մեզ
 համար:

ու ոչ դարբերի կամ գարի ընթաց
 քում:

Երբն բարեկամը դրամ է թէ
 կովկասում, ցեղերի առանց խը-
 րութեան, ամենքն էլ մեծ սպե-
 տորութեամբ են ընդունում ռու-
 սական պարտութեան լուրերը:
 Երբն տեսակ ոգեւորութեան միջ
 է և ռուս յեղափոխական ու բան-
 տար արք:

Ահա ռուսական ներկայ ոչ մի-
 մի անկման ամենախոշոր գուշա-
 կիչ նշանները:

Հպատակները հրճվում են ի-
 րենց կառավարութեան անկու-
 մով. հրճվում են, որովհետեւ
 իրենք էլ լինում են այդ կա-
 ռավարութեան և իրենց ուժերը
 չէին բաւում ընկճել նրան. հրճ-
 վում են, որովհետեւ ճապոնացու
 ամեն մի հարածը ռուս բռնա-
 պետութեան հիմքերն է խախ-
 տում:

ՎԱՐՇՈ

ԱՐՏԱՍՏՄԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ

«Բայց անոնք... Օ՛ ստա նոյաւած-
 քով կը դիտեն,
 Շալժուճները՝ թէ պիտ կոտլ՛մ
 արգեօք վէս.
 Եւ պարտատ են ծափահարել շոյս
 դէն»
 Եթէ յաղթեմ, ու լալ՛ եթէ մնա-
 նիմ ես...»
 Վլաս, թիւ 609 Շարժում

Ահա շատ կծու, բայց շատ արդա-
 րացի ռոզդք մը, որ շիկացած երկա-
 թի մը պէս կուզողի մեր սրտերուն
 ու ամենայն իրաւամբ: Սա չե՞ն մեր
 նայուածքները դէպի հայրենիքի հա-
 րազատ հերոս այդ լեռնորդները,
 Գրեթէ 1893էն ի վեր երբ «Ճարտի ող-
 բացիակ առիւժը» յայտնուեցաւ հայ-
 րենիքի գրկին այդ անմասշտի լեռ-
 ներու գագաթները, միշտ հիացումով
 ու պարծանքով յիշեցինք թէ իր ա-
 նունը, սակայն վաղիկան մը իսկ
 մտքերնէս շանցաւ գործնական հա-
 մակարեցով օգնել անոր: Միշտ գա-
 տապարտելի անտարբերութեամբ մը
 ակնկալեցինք որ յեղափոխական կու-
 սակցութիւնը, մեր երեւակայու-
 թեանը մէջ միայն գոյութիւն ունե-
 ցած հարստութիւնովը սո՞՞ք զնէ անոր
 արամադրութեան տակ, բնաւ չխոր-
 հեցանք թէ ո՞ր կից պիտի ըլլար այդ

մարմնոյն հարստութիւնը քանի որ
 մենք չէինք օգնել պէտք եղած չա-
 փով: Շատ թեթեւօրէն վարուեցանք,
 մեր առջեւ ելնող ու շատ յեղափոխա-
 կան եմ ըսողները զանազան չղի-
 ցանք: հարկ չեղած տեղերը տուինք
 ու հարկ եղածին զլացանք, իսկ յի-
 շափոխական մարմինը այս տխուր ե-
 րեւոյթին հանդէպ, դառնացած սրբ-
 տով թէեւ բայց միշտ հաւատարիմ իր
 բարձր կոչումին: Լուկ ու Գիւրգի իր
 անցուկ միջոցներով, կրցածին չափ
 կրցաւ զարդարել հայ-յեղափոխական
 տարիգրութեան էջերը: Խառնասօ-
 ներով, խաստրոններով, Բասէնի անց-
 քերով ու հիւսայ ալ Սասուններով:
 Տարօնի այդ անընդական հերոսի իյ-
 նալէն վերջ, անոր տեղը բաց չը թո-
 ղուց, այսօր Անդրանիկներ յաջոր-
 դած, գործը աւելի լուրջ կերպա-
 րանք առած է. իսկ այն յեղափոխա-
 կան մարմինները որոնք չուզեցին
 կամ չկրցան բաւականութիւն տալ,
 յեղափոխութեան աստիճանաբար զար-
 գացման պահանջներուն ու սոսկ ա-
 նունի ետեւէ ինկած, կամ իրենց կա-
 չին համար ամէն սրբութիւն ոտքի
 տակ առած, այսօր իրենց գոյնը ա-
 դաւային մերկութեամբ շերտանէ և
 Հիմայ ալ երբ ըսենք... աղբար
 կուսակցութիւնները ամէնքն ալ ա-
 պականաւ ին... կուտեն դրամները
 ...» ասիկայ արեգակին դէմ վարա-
 գոյր քաշելու պիտի նմանի, Կոյրերը
 անդամ տեսան, խուրին իսկ լսեցին
 թէ իրապէս կայ յեղափոխական մար-
 մին մը թէ ոչ: Աստի քանի որ այլ-
 եւս իրողութիւնը մէջտեղն է, ինչ
 ըրինք մենք և ինչ էլ կրնենք, եթէ
 հօս ու հոն ինքնաբերաբար կամ զը-
 դումներով քանի մը ֆրանքներ հա-
 ռաքուեցան, այդ գուժարները՝ բաղ-
 դատամբ գործի հակայ պահանջնե-
 րուն, շատ անբաւական ու մեր ազ-
 գային արժանապատուութեան պատիւ
 թրեղէ շատ հեռի էր. ահա հայրենի-
 քի խորհրդը ջան-ֆէզային կուրծք
 պարզած, իր բոլոր աննպաստ պայ-
 մաններն մէջ, հայրենիքի Ս. դա-
 տին համար կուր կը մղէ, եթէ չա-
 րունակենք անպարտաճանաչ գանդի-
 եթէ մի քիչ դեղեւինք մեր օգնու-
 թիւնները փութացնել իրենց, ու ու-
 նոնք զիջողական ճիգերէ ու մա-
 ջառուսներէ վերջ յուսահատ իյնան,
 ամօ՞թ ու բիւր ամօ՞թ միզ: Քանի
 ժամանակը ուշ չէ գործնականապէս
 փութանք օգնել: Անոնց լքումի մատ-
 նուած իննալէն վերջ վրանին կեղծա-
 տարաբար ողբալը վատութիւն է, քա-
 նի որ կրնայինք իրենց յաջողու-
 թիւնը ապահովելու ու չրինք զայդ
 Հայ-հարուստ, հայ-բարեկեցիկ խեռ

ՌՈՒՍԱ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅՐԸ

Մտերու կովկասցի մի բարե-
 կամ գրում էր — «այստեղ գեռ-
 եւս կարածներ ի մասին: սիո-
 խութիւն են սպասում»:

Այս կտրճ խօսքը մի խոշոր
 հէնգում թիւն է կովկասցի անոչ-
 խաբամիտ հայերի հասցելին, ո-
 որոնք միամտութիւնն ունեն գեռ
 հաւատալու թէ՛ ռուսական ներ-
 կայ յոռի և օտար ցեղերին ձու-
 լելը իրեն նպատակ դրած կառա-
 վարութիւնը կարող է այնքան
 աղնի լինել, որ ուզենայ իր գոր-
 ծած և ըմբռնած ներքին կեանքի
 սխալները շակել:

Սենք այս էջերի մէջ, տարի-
 ների ընթացքում, բազմաթիւ ան
 գամներ, հայկական կոտորածնե-
 րը մատնանշելով, և կովկասի
 հայութեան պատմութիւնը վեր-
 յիշելով պնդել և քարոզել ենք-
 թէ հայ ցեղի ամենամեծ թշնա-
 մին ռուս կառավարութիւնն է,
 ու երբեմն շափողանց գրգռված
 մեր այն քաղաքական գործիչնե-
 րի դէմ, որոնք խեղճ տաճկահա-

Պիեռը կարծես միշին դարերու
գրածք սը ըլլար. հեղինակը
յայտնի չէր, գոնէ մեզի համար.
Ամբողջ բովանդակութիւնը այս
է. մարդիկ կը շարժարուին, շատ
յուր տեղը, ասորինքով ահաւի
վորձանքնէրու կը հանդիպին, կը
մեռնին, նորէն կ'ողջնան, կը
մեռնին ու կողջնան, մինչեւ որ
հաւատքը, յոյսը և սէրը յայնժա-
նակեն. ոճրագործներն ալ միշտ
օճիրը կը գործեն ամենազուար-
է անպատելի վայրկեաններու և
պարագաներու մէջ, ու վերջա-
պէս երբ բոլոր կորսուած զոհերը
օղջ օղջ մէջտեղ կուգան. ոճրա-
գործին ալ գործը կը լինայ:

Ինձին վրա գործող տիպերը
այնքան ստեղծ մեռան ու օղջնե-
ցան, մահուան խօսքերը այնքան
կրկնեցան, որ քու լիսնեքէն մին
վար ընկաւ և քիչ մնաց խեղճ Պա-
պեանը իրապէս մնացներ. կը
խնդրենք զգոյշ ըլլալ:

Առասպելական ոճրագործներ,
առասպելական համբերողներ, ա-
ռասպելական օղջացումներ, ա-
ռասպելական մահացումներ, ո-
րոնք կեանքի մէջ հաղիւ թէ գո-
յութիւն ունեցած ըլլան և այդ-
պիսի իմաստ նիւթերը կը հրամ-
ցուի հասարակութեան անոր ճա-
շակը, միտքը և հոգին կրթելու
համար...

Հապա՛ տիկին Յակոբեանի ար-
տասանած ճաքէն, որով կուզուէր
մեզ պատկերացնել Սասունցի
իկեւ մեծ բայց պարզ հերոսու-
հին. Ո՛հ ան ինչ բառերու ան-
միտ կոյտեր էին. հոսհոսական
երեսփոխանի կամ ոտանաւորճի
մը անմտ բառեր, խօսքեր, խո-
շոր խոշոր, Սասունցի ճաքէի բե-
րանը գրուած:

Եթէ Սասունցի ուրիշ ճաքէ մը

նեղակայցմանը գտնուէր, պիտի
խնդար տեսնելով հոսոսի մը բեմ
հանած ճաքէն, սուտեան, կեղ-
ծիքի մը մէջ շարուած:

Այստես տիկին Յակոբեանի ճի-
գերուն, որչափ որ ուզեց այդ
անմիտ ոտանաւորին կեանք, հո-
գի, իրականութիւն, զգացմունք
նեղակայցմանը շարուած. ինչպէս ոչ
մէկ վարպետ կրնայ հրաշակերտ
փայտեայ ճարգու մը շունչ տալ:

Երկրայցման միտքարկան
կողմնին ալ կային. նախ որ հա-
յերէն էր, ու ներկայ եղող հայ
հասարակութեան բաւական ըստ-
ուարութիւ լինելը ցուցուց թէ՛
ալ ժամանակ է որ Վառնայի մէջ
հայերէն ներկայացումներ տրուին
գոնէ ամիսը մէկ անգամ. Երկ-
րորդը՝ որ իրկշականութիւն և
միտասութիւն բոլորովին գոյու-
թիւն չունէին բեմին վրա:

Դերակատարներու մասին խօ-
սիլ չենք ուզեր, որովհետեւ ա-
նոնք ամէնքն ալ գրեթէ աշխա-
տած էին ոչ իրական տիպերը,
իրական ներկայացնել. սակայն
հեղինակը անանկ մարդիկ ստեղ-
ծած է, որ հանճարներն անգամ
զանոնք իրական դարձնել չէին
կրնար:

Խորհուրդ կուտանք Պ. Պապա-
եանին այդ տեսակ խաղերէ ալ
ետ քաշիլ, եթէ ինք իրապէս
տրամագիր է գեղարեստին ծա-
ռայած ըլլալ, մանաւանդ տիկին
Յակոբեանի և Երամեանի. Այդ
տեսակ խաղերը չեն կրնար մի-
ջակ, սկսնակ դերասանները յա-
ռաջագիծութեան իրական ճամ-
բուն մէջ զնել:

Իրական կեանքէն, կամ անոր նը-
մանող, մօտիկ տիպեր ու զգա-

ցումներ պիտի վեր հանուին ըս-
մին վրա, ինչ տեսակը ալ ըլլան
անոնք:

Աւելորդ չենք համարեր նկա-
տել որ մեր դերասանները այն-
քան հայերէն չեն խաղցած. որ
իրենց մայրենի լեզուն իբր օ-
տարներ կարտասանէին(*):

(*) Պէտք է Սոփիօրները եռանդ-
նին քիչ մը զգուշ և այս ու այն
բացուածքէն հասարակութեան ցոյց
յտան թուղթի կտորներ և ձեռքի
շարժումներ: Այդ կը փճացնէ տը-
պատրութիւնը:

ՀԵՐՊԱՐՏ

(Մանկավարժական)

(Շար. 612րդ թիւին)

Բ.

Տեսանք թէ երախտերու կա-
ռավարութեան համար ողբաղ-
մունք մը տալը լաւագոյն միջո-
ցըն է: Զբաղմանց մէջ կարելոր
տեղ մը կը գրուէ գոստանդու-
թիւնը:

Անգործութենէն յառաջ կու-
գան խանգարումներ և անկաբ-
գութիւններ. ի հարկէ լաւ է երբ
աշակերտները կը զբաղին օգտա-
կար պարագմունքներով, օրինա-
կի համար արհեստի վերաբեր-
եալ կամ գաշտային աշխատանք-
ներով, աւելի լաւ է երբ զբաղ-
ման միջոցին անոնք իրենց ա-
պագայ կրթութեան համար օգ-
տակար գիտելիքներ սորվին:
Բայց այս ամէնը դեռ կարելի չէ
գոստանդութիւն անուանել. Եւ
ուր որ կարգ պահելը ինքնին
ալ դէն գժուար է, այնտեղ բան

կարելի չէ սորվեցնել, գո-
նէ հիմնականօրէն սորվեցնել:
Շատ աշակերտներ աւելի շուտ
կը զսպունար հաստատորի մը կամ
վաճառականի մը քով, քան թէ
գարոցին մէջ. Բայց տարբեր
բան է կառավարումը, տարբեր է
գոստանդութիւնը. Առաջնոյն
սահմանը աւելի ընդարձակ է և
կը տարածուի գարոցէն դուրս ալ:

Դասաւանդութիւնը ազդեցու-
թիւն ունի անհատի կրթութեան
այսինքն ապագային վրայ, մինչ-
դեռ կառավարութիւնը անմիջա-
կան ներկային համար ի գործ կը
գրուի: Դասաւանդութեան մէջ
նորէն պէտք է զանազանել տար-
բեր տեսակներ: Ամէն գոստան-
դութիւն չէ մանկավարժական:
Կառավարութիւնը գոստանդու-
տակն է աշակերտին մէջ ամբա-
բել կարելի եղածին չափ շատ
գիտելիքներ, որ ան կեանքի
մէջ կարենայ յառաջ երթալ, ա-
ռանց ի նկատի ունենալու անոր
մէջ բարոյական նկարագիր մը
կազմելը: Այս նպատակին համար
ի հարկէ ամենալաւ ուսուցիչը այն
է, որ կը սորվեցնէ կարելի եղա-
ծին չափ շուտ, կարելի եղածին
չափ շատ և դիւրին: Մեր խօսքը
այս տեսակ գոստանդութեան
մասին չէ, մենք կը խօսինք յա-
նուն «կրթող և դաստիարակող
գոստանդութեան»:

Մարգարէտեմի

Շարունակելի

Պատուաբան խմբագրութիւն

Շարժում Լրագրոյ

Հաճեցէք ներկայս հրատարակել

Ձեր յառաջիկայ թերթի մէջ:

Տեղոյս Աղբ. ընկ. ընդհանուր ժո-
ղովը որ Ապրիլ 25 կիրակի օր տեղի

հետ բերելով Լանդուրից վերցրած
ապրանքների լի պարկը. պարկից
հանեց սկիւ փայտէ սրակը, դանա-
կի հարածով հանեց փայտեայ խը-
ցանը, զրեց նոյնպէս փայտեայ ձա-
գարը և երկու գուռաթներ լիքը 19-
րեց, որոնց պատուը դրել էր սեղա-
նի դեր կատարող մի տախտակի վրա:
Երկուսն էլ խմբին. պատուը մեծ
հանդիմանով դանդաղ ու մանր կուճ-
րով կարծես իր մէջ ձգելով կենդա-
նարար հեղուկը: Երկուսն ալ յետոյ նա
խորունկ շունչ առաւ. դէմքը լիա-
կատար գոհունակութիւն էր արտա-
յայտում:

— Լա ջուր է, չէ՞. հարցրեց Բո-
յագիրը աչքի շարժումով սրակը
պատուին ցոյց տալով:

Պատու լայնօրէն ժպտաց աչքերը
գոցեց և շնչով սակց:

— Երակներես միջով կրակի պէս
անցաւ. եթէ ես ոչ թէ մի դար,
այլ մի քանի դարեր ապրէի, կրկին
ինչ սրա խմելը չէր ձանձրացնի...
Երկուսն էլ նստանքը, որոնք միշտ
կարող են սրանից ունենալ, պատաս-
խանեց պատուը:

— Թէ՛ լից...

Պատուը թէյամանից թէյ լցրեց
կրկին նոյն գաւաթների մէջ, ապա

սկսեցին զուգնթացարար թէյ և օդի
խմելը: Վե՛լը Բոյագիրը օյորվելով
օդու սրակը պահեց պակուս և և
դրեց իր անկողնի վրա:

Պատուը նստել էր օճախի մօտ և և
քթի տակին փնթփնթում էր. իրանը
չարժելով առաջ և և. նրա յիշ-
դութիւնները տիրել էին նրան. նրա
լայն բացած աչքերը տեսնում էին
անցեալի զրազները. պարզ կեանքի
մոռացված պատկերները, որ տունը
բայում անցել էին անօթութեան և
կշտութեան, քունի և ուսելու,
օչխատութեան և ծուլութեան հետ
զուգնթացարար:

Այդ պատկերները դուրս եկան մո-
ռացութիւնից և 19րին ծխոտ հիւ-
ղակը... աւրոզլ անուհիման տունը-
րան իր հայելանման լինողով, իր
խալիի վրա բանված արծաթ շերտի
նմանող գեանքով, տեղաւորվել էր
այստեղ: Ու պատուը ահագին և և
զուռնաղեղ շերտերով խալիի վրա
փնտուում էր իր երիտասարդութեան
յիշատակելի վայրերը:

Ահա այնտեղ, ուր լծի մօտ առա-
ջին անգամ նա տեսել էր իր Պետրո-
սին, որին «Եկեր» մակդիրն էին
տւել. որովհետեւ նա արեւմտեան
տունդայից էր եկել: Մինչ ծերուկ-

ները զրուցում էին, իրենք երիտա-
սարդ զոյգը, նստած լծափ թօրժ իտ-
տերի վրա լսում էին սուտփիւնը ե-
ղէպներ, որոնք նմանում էին Երա-
յին կոյսերի շաղ ընկած մագերին:
Եղեցնուտում լուրում էին բազիրը,
հետու պուրակի վրայով թռչում է ն
կարապետը, որոնց ճիշերը ընկում
էին ջրի խողով, հարթ մակերեսով լի
վրա, ու սուր արծազանք տալով տա-
նում անհետանում էին ցրրու ցան
մազերի մէջ...

Եղեցներ, որոնք շարժվում էին
թեթեւ քամուց, սուսփիւնի մէջ
Պետրոսը իրան սէրը բացատրեց և և
ինքն էլ համաձայնվեց նրա կիւնը լի-
նել:

Արդէն սրելը, հրավատ զեփիւտով
սահեց ջրի մակերեսոյթի, ու հը-
րոսեց իր նայածը սուզելով ջրի
խորը, անցաւ հետու լիւրան տակը:
Միայն երկնքի վրա երեւացող շեր-
տերն էին ցոյց տալիս նրա թագնված
տեղը: Մարելով նա կարմրագոյն ժա-
պաէնների նման հաւաքեց վերջա-
լոյսը ու խոտը սրտից մարգար-
տաշար ցողով... Երիտասարդ զոյգը
չարունակում էր նստել ձեռք ձեռ-
քի տւած... և անա այդ ձեռքերի
լուրայն սեղմումի և իրենց շուրջը

կատարվածը գիտելու մէջ էր կայա-
նում եղանկութիւնը:

Իսկ վերջը. էլ երջանկութիւն չը
կար, այլ աշխատանք, քաղց, զր-
կանք, մանկանց աղմուկ ու հարած
ամուսնու գոռում գոչումները... Յե-
տոյ եկան անյաջողութեան տարի-
ները. անասունների ոչնչացումը սմ-
բակների հիւանդութիւնից, երեխա-
ների կորուստը ծաղկախտից. աղ-
քատութիւնը՝ ամուսնու մա՛րը և և
սխտեր կեանքը օտարի հիւղակում,
օտարի օճախի քով...

Բայց և այդ կեանքում, որը նը-
մանում է երկար ու մութ գիշերի
նախընթաց միջնադին, պատահում
էին երջանիկ վայրկեաններ, երբ մո-
ռացվում է վրշաը, թախիծը, և և մի-
այնութիւնը: Այդ վայրկեանները
պարգեւում էր կրակոտ ջուրը, ինչ
հրաշալի ջուր: Նա աղքատների
տալիս է հարստութիւն, տնանկե-
րին ապաստան, վշտաբեկներին ու-
րախութիւն, որբերին կորսված
բարեկամներ...

(Շարունակելի)

պիտի ունենար մեծամասնութիւն գոյացած չըլլալուն յետագած է յառաջիկայ կերակրի Մայիս 2-ի կէսօրէն առաջ ժամը 10-ին Ազգ. վարժարանի մէջ :

ՕՐԱԿԱՐԳ

- Ա.— Վաւերացումն նախորդ նստի ատենագրութեան :
- Բ.— Համարատուութիւն Տնօրէն Խորհրդոյ :
- Գ.— Առաջարկներ :
- Դ.— Հրատարական Գործնական Ժողովոյ :
- Ե.— Նոր ընտրութիւն եթէ հարկ դատուի :

Կը խնդրուի պատուարժան անդամներէ որոշեալ օրը ներկայ գտուիլ : հակառակ պարագային ներկայք մեծամասնութիւն համարելով ատենադպիր բացուի :

Դիւան Աղբ. Ընդհ. Ժողովոյ
 Ատենադպիր Ստենայեան
 Պ. Քիւրճեան Եղան Սեւեռճեան
 Վառնա 26 Ապրիլ 1904
 (ԿնիՔ)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Պօլսէն կը հեռագրեն Վրէնա. որ աւստրիական և ռուսական դեսպանները իրենց կառավարութիւններու կողմէն հրաւիրւած են Մակեդոնիոյ մէջ ներմուծուած բարենորոգումներուն մասին հաշիւ ներկայացնելու : Կը խօսուի միջազգային գօնֆէրանսի մը մասին :

— «Ճայթ» թերթին կը հաղորդեն որ Սուլթանը Թէրտինանտ իշխանը Պօլս հրաւիրելու մտքէն ետ կեցած է, որովհետեւ դժուարութիւններ կան թուրք պուլկարական համաձայնութեան պայմանները իրագործելու մէջ :

— Սելանիքի բաւական տարածուած թուրքերէն «Ասր» թերթը մակեդոնական բարենորոգմանց համար նշանակուած ռուս ներկայացուցիչ Տէմէրիքի պահանջին վրայ դադարած է, որովհետեւ քանի մը սուր յօդուածներ գրած է ռուս-ճապոնական պատերազմի մասին :

ՌՈՒՍՈՒ

Ապրիլ 29ին Բեթերսպուրկէն Պերլին կը հեռագրեն թէ, Կրօնչաքատի զինուորական միջերանոցը օդը հանել ուզողը ռուս սպայ մը եղած է և արդէն ձերբակալուած է :

— Թուս ռուսիկանական վարչութիւնը ամէն մէկ ճարտար լրտեսի գլխու համար գումար մը նշանակած է : Այս կարգադրութեան շարժառիթը այն է որ ճարտարական բազմաթիւ լրտեսներ կը թափառին ամբողջ Թուս սաստանի մէջ :

— Ամիրալ Սկրիդնով և իր ըսպայակոյտը Վլատիվոստոք մեկնած են :

— Ապրիլ 26ին Լօնտօն կը հեռագրեն որ Ամիրալ Ալէքսիէֆ Բորթ Արթուրէն մեկնած ատեն թրէնի վրայ նետուած ռուս մը մը վիրաւորուեց է :

— Ճարտարագիտութիւնը մեծ խնամքով կը վերաբերին դէպի ռուս վիրաւորեալները ու մեռածները : վերջիններու շիրիմներուն վրայ մօտ 1400 հող է, կարճիւր խաչեր տնկած են և ծաղիկներով զարդարած են :

ՌՈՒՍ—ՃԱՔՈՆՍՊԱՆ
Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Ապրիլ 28ին Բարիզի «Մաթէն» թերթը Բեթերսպուրկէն ստորագրուած իր մասնայ որ Մաթօուլիի քովը մեծ ճակատամարտ մը տեղի ունեցեր է, որուն մէջ ռուսերը Պարտուեցին և ժէնէրալ Չասուլիչ սպաննուած է :

— Նոյնպէս Բարիզէն կը հեռագրեն որ վերոյիշեալ ճակատամարտը շափազանց արիւնշիւղ եղած է : Երկու կողմէն ալ մեծ քաջութեամբ կռուեցին, ու մեծ կորուստներ ունեցեր են : Կը հաստատուի նաև Չասուլիչի սպաննումը :

— 28 ապրիլին Լօնտօնէն կը հեռագրեն թէ Պէլլը քրօնիք թերթը իմացած է որ Ճակոնչօնի մօտ ճակատամարտ տեղի ունեցեր է և ռուսները պարտուելով նահանջել են դէպի Հայ-Չենկ :

— Պատերազմի դաշտէն եկած լուրերը կը բացատրեն որ ճարտարագիտութիւնը զանազան ուղղութեամբ յառաջ կը խաղան, պիտի աշխատին Ռուսաց զօրքերու ետեւէն անցնելով, գրաւել Սարպինը, Մուկաշէնը և այդպէսով ժէնէրալ Քուրթալիքի ռուսները երեք կրակի մէջ առնեն :

— Բէթերսպուրկէն թերթը կը հաղորդէ որ ժէնէրալ Թօկօ տեղեկագրած է Թօքիօ թէ Թօրթ-Արթուրի հարաւակողմը կը լըսուին պայթումի ուժեղ ձայներ : Կը կարծուի որ ռուսերը յուսահատած սր այլևս դիմադրել չեն կրնար, իրենց զրահաւորները կընկղմեն :

— Ճարտարագիտութիւնը գրաւեցին նաև Թին-Թանկ-Չանկը, և գրաւող զօրքերը անոնք են, որոնք վիժուիքով ցամաք իջած էին :

— Լօնտօնի թերթերը կը հաղորդեն որ ռուսերը արդէն ոչնչացուցած են Թօրթ-Արթուրի նաւաբաժինը :

— Լօնտօնի ճարտարական դեսպանը յայտարարած է որ Չինաստանը պէտք է չէզոք մնայ, որովհետեւ այդպէսով միայն միւս պետութիւններուն չէզոքութիւնը կապահովուի : Իսկ եթէ Պօքորները Չինացիները զրգոնեն, ճարտարագիտութիւնը կը պիտի զրկէ

խաղաղութիւնը վերականգնել տալու համար :

— «Թայմս» կը հաղորդէ որ Չինաստանը զօրք կը լեցնէ սահմանագլուխը : Ռուսական «Նոյն» Վրէնի «Թերթը կառավարութեան խորհուրդ կուտայ պատրաստուիլ նաև Չինաստանի դէմ :

— Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ Մանչուրիոյ մէջ ռուս կառավարութեան ղեմ ապստամբիլ հրաւիրող կոչեր ցրուած են :

— Ամիրալ Ալէքսիէֆ Բեթերսպուրկէն հարիւր բժիշկ ուղարկել, որովհետեւ ռուս զօրքերու մէջ դիֆթերիա փորձարարքը խիստ տարածուած է :

— Բեթերսպուրկէն Պէլլին կը հաղորդեն որ ռուս կառավարութիւնը հրամայած է պատերազմական վիճակի մէջ դնել 10 և 17 զօրքաբաժինը, բացի այդ Սիբիրի զօրքաբաժինը արդէն պատրաստ ու կազմ վիճակի մէջ կը գտնուի :

ՌՈՒՍՍՊԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Ամէն օր պատերազմի դաշտէն խոշոր անյաջողութիւններ գուժող լուրեր կը հասնին Մոսքուա և Բեթերսպուրկ : Ռուս մամուլը մասամբ սեղմուած, ճնշուած կառավարութեան, մասամբ լուրջ, իրապէս հայրենասիրական զգացումներէ զուրկ կաշխատի ամէն խոշոր պարտութիւն ոչինչ համարել, ամէն անշնորք հրամանատար արդարացնել, և ժողովուրդը համոզել որ այդ պարտութիւնները պարտութիւն չեն, թէ ռուսաց զօրքերը զոհ կը ընթան ճարտարական գնդակներուն ոչ թէ անոր համար որ չեն կրնար դիմադրել, այլ որովհետեւ ժէնէրալ Քուրթալիքի ոչնչած է ճարտարագիտութիւնը խորքերը քաշել և ապա վճռողական ճակատամարտի դիմել : Մինչդեռ խիզ Բուրօթթըն, ինչպէս սկիզբները, նոյնպէս և հիմայ կը յայտարարէ որ ռուսական ուժերը Մանչուրիոյ մէջ չեն բաւեր ճարտարագիտութիւնի գիմադրելու համար :

Մէկ խօսքով ռուս մամուլը ճշմարտութիւնը կը գոցէ ժողովուրդէն, անոր սին յոյսեր կուտայ, կը սորվեցնէ թեթեւ կերպով վերաբերիլ գէպի ճարտարագիտական ճարտարագիտութիւնը և հանձնարար այսօր ամբողջ աշխարհը կը զարմացնէ :

Այո, այսօր ճարտարագիտական քաղաքական տեսակետով այնպիսի բարձրութեան մը հասած է որ անոնց բանակին ուղեկցող բարոյացի թղթակիցները միայն կապչին ու կը շուարին :

Այս դառն իրականութեան առջեւ մարդու արգահատանքը չկը շարժեն այն գոհակի նկարները :

որոնք նոյնպէս ռուս կառավարութեան գիտակցութեամբ կը տարածուին : Ռուս ամբոխին մէջ, Անցեալ օր տեսայ պատկեր մը, որուն մէջ ռուսը ներկայացուած էր իբր հակայ մը, ու անոր գլխու պաննիէն թեւերի տակէն պիտի կարծիքի ճարտարագիտութիւնը կերտուի :

Մէկ խօսքով ռուսական մարտիկը կը կեանքին այս խոշոր ճարտարագիտութիւն մէջ ռուս մամուլը, մեծ մասամբ իրեն վայել բարձրութեանը վրայ չի գտնուիր, ու կը խանակ ժողովրդին աչքերը բանալու, կը շխատի տաւիլ հաստ քողով մը, ստու թեան և կեղծիքի քողովը ծածկել :

ՕՐԱՆՆ ՍԱԷՏԻՆԷՆԷՆԷ

ՄԱՔ ԲԱՐՆԱԻ
ՎԵՐՁՆԸ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ

«Նախընտր» հայ դերասանական խումբը այս գիշեր վերջին լրացրած պիտի ներկայացնէ Տ. Վ. Պապանովի առաջնորդութեամբ :

- Ա.
- «Թեթեւ սուրկ պարօդը»
- Ջաւեդ մէկ արար
- Բ.
- «Պատույ համար անգլի ռիթմ»
- Թատերգութիւն 2 արար
- Գ.
- Պարերգ
- Դ.
- «Վայ գլուխ»
- Խիստ ծիծաղաշարժ գուպու 1 ար.

ՀՍԹՊԱՆ ՎԱՐՃԱՐՈՆ
ԼՈՁԱՆ, [ՉՈՒԻՑԵՐԻԱ]

—(o)—

Հայկազեան վարժարանը կը դուրսի 10էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ աղագիտ և եւրոպական լուրջ, ստորջ և հիմնական կրթութիւն :

Հայկազեան վարժարանը ներկայ վեցամսայէն սկսեալ հինգ աշակերտ պիտի ընդունի մեծ զեղջով :

Վարժարանին տնօրէնը յանձն կառնէ նաև հայ օրիորդներ պատուաւոր ընտանիքներու մէջ գիտեղիւր ինչպէս և անոնց բարոյական և իմացական կրթութեան վրայ հսկելու գործը :

- Դիմել հետեւեալ հասցէին
- Մ. Նալպանտեան
- Ինստիտուտի Արեւիկի
- Լօզան, [Սիւիս]

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ